

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. սեպտեմբերի 3-ից 7-ը Դուշանբեում (Տաջիկստանի Հանրապետություն)՝  
բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի  
գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Իրինա Ղափլանյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Դուշանբե (Տաջիկստանի Հանրապետություն)

2018թ. սեպտեմբերի 11-ից 14-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

5. «Կանաչ կլիմայական հիմնադրամ» (GCF)

6. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

7. «Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) Համակարգված երկխոսություն Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի հետ» բարձրաստիճան հատվածի հանդիպում

8. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

- Հանդիպում են ունեցել Տաջիկստանի ներկայացուցչի հետ, որի ընթացքում նա հայտնեց, որ նրանք արդեն հաստատել են 6 նախագիծ: Ամենայն հավանականությամբ դա պայմանավորված է նրանով, որ նրանք համարվում են տարածաշրջանում առավել խոցելի երկիր՝ Կլիմայի փոփոխության տեսանկյունից, ըստ իրենց բնապահպանության կոմիտեի: Հարկ է նշել, որ այս առումով, անհարժեշտ է ավելի շատ ծրագրեր մշակել և հնրավորության դեպքում ներկայացնել Կորեային, եթե ժամկետները դեռ չեն անցել: Տաջիկստանի ներկայացուցչի տեղեկացմամբ իրենց երկիրը ստացել է 60 այլ նախագծերի միանալու առաջարկներ:

- Տնտեսական համագրծակցության և զարգացման կազմակերպության /OECD/ ներկայացուցիչը՝ պարոն Տակայոշի Կատոն, իր զեկույցում նշեց մեր տարածաշրջանի տարբեր երկրներում իրականացված Կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատման կարիքների մասին, և իրենց ուսումնասիրության համաձայն, Վրաստանին անհրաժեշտ է տարեկան \$ 1.6 մլրդ ներդրում մինչև 2030 թվականը նախապատրաստվելու և հարմարվելու համար, Ղազախստանին՝ տարեկան մինչև 3.3 միլիարդ դոլար: Սակայն պարոն Տակայոշի Կատոնին հաստատեց, որ Հայաստանի համար նման գնահատում չի արվել, բայց կարող է արվել, եթե Հայաստանը հետաքրքրվածություն ցուցաբերի վերջինիս շուրջ:
  - Վերոնշյալ հարցի հետ կապված առանձին համդիպում եմ ունեցել պարոն Տակայոշի Կատոնի հետ, որի ընթացքում քննարկվեց գնահատման հարցը Հայաստանի համար և որոշում կայացվեց ընթացք տալ այդ գործընթացին:
  - Հանդիպման ընթացքում քննարկված կլիմայի ֆինանսավորման հետ կապված թեմաներից առավել ուշագրավ էր ԳԷՀ 7-ի Կլիմայի փոփոխության մեղմացման ուղղությունները, մասնավորապես՝ էլեկտրոնային շարժունակությունը (e-mobility), մաքուր տեխնոլոգիական նորարարությունները և էներգաարդյունավետության ընդունման արագացումը: Հարկ է նշել, որ Հայաստանը պետք է աշխատի մաքուր տեխնոլոգիաների և էլեկտրական շարժունակության նախագծերի մշակման համար՝ որպես ֆինանսավորման բարձր ներուժ ունեցող ծրագրեր:
  - ԳԷՀ-ի ներկայացուցիչը իր զեկույցում նշեց, որ մեր տարածաշրջանի որոշ երկրներ կարող են դիմել «կլիմայի փոփոխության հատուկ ֆոնդերին» / SCCF/.
  - Երկրորդ Պանելի նախագահ Գերման Վելասկեսը, ով հանդիսանում է նաև Գլոբալ կլիմայական հիմնադրամի մեղմացման և հարմարվողականության բաժնի տնօրեն իր փակման խոսքում հարցրեց, թե ինչու այս տարածաշրջանի երկրներից ոչ մեկը, ԳԷՀ-ի ծրագրերի իրականացման ընթացքում չեն ուսումնասիրել դրանք ընդլայնելու հնարավորությունները՝ (հատկապես, եթե այդ ծրագրերը հաջողված էին) Գլոբալ կլիմայական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացող: Նա նշեց, որ քայլեր ձեռնարկվեն տարածաշրջանի երկրների կողմից վերոնշյալ հարցի հետ կապված, քանի որ Գլոբալ կլիմայական հիմնադրամը պատրաստ է տրամադրել ֆինանսավորում՝ տարածաշրջանում ԳԷՀ-ի ծրագրերի ընդլայնման համար:
- Այս կապակցությամբ անհրաժեշտ է ուսումնասիրել Գլոբալ կլիմայական հիմնադրամի հանձնառությունը՝ ԳԷՀ-ի հաջող ծրագրերի ֆինանսավորման համար: ԳԷՀ-ի ներկայացուցիչ Ուրիշ Ափելը իր զեկույցում նշեց, որ Հայաստանում իրականացված ԳԷՀ-ի 3 միլիոն դոլարի ծրագիրը հաջողված էր:

## 9. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆՂԻՊՈՒՄՆԵՐ

- Երկկողմ հանդիպում եմ ունեցել Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի արտաքին կապերի տնօրեն Դոկտոր Օյուն Սանյասուրենի հետ: Հանդիպման ընթացքում քննարկեցինք Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ-Հայաստան համագործակցության տարբեր ասպեկտները: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հավատարմագրման գործընթացին: Հանդիպման ընթացքում նշվեց, որ որոշ հարցերի շուրջ էլեկտրոնային նամակ է ուղարկվել, պարզելու համար, արդյոք նախարարության և Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի միջև կա որևէ շահերի բախում, որոշակի առաջընթաց, սակայն հարցի լուծումը դեռևս չի տրվել: Սվետլանա Ֆրենովան, Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խորհրդատուն, (ով նույնպես ներկա էր երկկողմ հանդիպմանը) կապի մեջ կլինի մեզ հետ, որպեսզի մենք տեղյակ լինենք այս և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի հետ կապված այլ հարցերի առաջընթացի մասին:

- Տիկին Օյունը անդրադարձավ նաև ֆինանսական և տեխնիկական օգնության օպտիմալ օգտագործման կարևորության հարցին և նշեց, որ ընդհանուր առմամբ սխալ պատկերացում կա այն հանգամանքի վերաբերյալ, որ եթե երկիրը ստանում է Ֆինանսավորում «Հարմարվողականության հիմնադրամի» կողմից, ապա չպետք է դիմի կամ հաշվի առնի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամին: Նա նշեց, որ դա սխալ ենթադրություն է: Նշված հիմնադրամներն աշխատում են փոխլրացման սկզբունքով, և ստացող երկրները պետք է առավելագույնի հասցնեն այն ֆինանսական մեխանիզմները, որոնք առաջարկում են այդ երկու հիմնադրամները:

- Հանդիպման ընթացքում ներկայացրեցի մեր հետաքրքրությունը Հայաստանում մասնավոր հատվածի ներգրավման ուղղությամբ, հատկապես «նորարարությունների և էլեկտրոնային շարժունակության (e-mobility) ոլորտում: Տիկին Օյունը նշեց, որ Կողմերի 24-րդ հանդիպումը /COP-24/ մեծ հարթակ կհանդիսանա ցանցի ներգրավման և փորձառու մասնավոր ներդրողների հետ հանդիպման համար:

Հարց բարձրացվեց նաև «Հայաստան-Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ համաձայնագրի» շուրջ՝ նշելով, որ երախտապարտ կլինեն, եթե Հայաստանը կարողանա արագացնել իրականացման գործընթացը:

- Այս խնդրի հետ կապված հանդիպում ունեցա Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի գլխավոր խորհրդական Դուգլաս Լեյսի և հիմնադրամի իրավախորհրդատու տիկին Մեերիմ Քաշկինբաևայի հետ: Նրանք բացատրեցին, որ «առավելություններն ու անձեռնմխելիությունները» չափորոշիչներ են իրենց երկրի բոլոր պայմանագրերի համար, և նրանք պատրաստ են Հայաստանի հետ աշխատել՝ ստեղծելով աշխատանքային

խումբ, սակայն երկրի կողմից իրենց մեկնաբանությունների վերաբերյալ արձագանք չեն լսել: Նշեցին նաև, որ եթե պայմանագիրը չվերջնականացվի միջոցների օգրագործման պահին, ապա Բնապահպանական ծրագրերի իրականացմա գրասենյակը չի կարող ազատվել հարկերից:

## **10. Ձեռք բերված ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Հանդիպում եմ ունեցել «Կանաչ կլիմայական հիմնադրամի» մասնավոր հատվածի Ֆինանսական ոլորտի առաջատար մասնագետ պարոն Ռաջել Մահաջանի հետ: Նա շնորհակալություն հայտնեց Հայաստանում վարկավորման սահմանափակման հետ կապված հարցը բարձրացնելու համար, և նշեց, որ անպայման կմտածեն ֆինանսավորման այլընտրանքային տարբերակների մասին, ինչպես նաև կքննարկեն մասնավոր հարվածի վարկավորման հարցը՝ առանց սուվերեն երաշխիքների, և արդյոք դա ընդունելի կլինի Հայաստանի համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագայում հանդիպել և քննարկել բոլոր հնարավորությունները, հաշվի առնելով, որ Հայաստանում վարկավորման սահմանափակումները բաց են և ընկալունակ:
- Հանդիպել եմ նաև Գլոբալ կլիմայական հիմնադրամի Գլխավոր իրավախորհրդատու տիկին Մերիմ Քաշկինբաևայի հետ: Հանդիպման ընթացքում տիկին Քաշկինբաևան հարց ուղղեց այն մասին, թե արդյոք կարող ենք արագացնել Գլոբալ կլիմայական հիմնադրամ-Հայաստան համաձայնագրի մեր մեկնաբանությունները և առաջ շարժվել: Այս կապապցությամբ անհրաժեշտ է բանակցել համապատասխան պետական մարմինների՝ արտաքին գործերի և ֆինանսների նախարարությունների հետ:
- Հարց բարձրացվեց նաև «Հայաստան-Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ համաձայնագրի» շուրջ՝ նշելով, որ երախտապարտ կլինեն, եթե Հայաստանը կարողանա արագացնել գործընթացը:
- Այս խնդրի հետ կապված հանդիպում ունեցա Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի գլխավոր խորհրդական Դուգլաս Լեյսի և հիմնադրամի իրավախորհրդատու տիկին Մերիմ Քաշկինբաևայի հետ: Նրանք բացատրեցին, որ «առավելություններն ու անձեռնմխելիությունները» չափորոշիչներ են իրենց երկրի բոլոր պայմանագրերի համար, և նրանք պատրաստ են Հայաստանի հետ աշխատել՝ ստեղծելով աշխատանքային խումբ, սակայն երկրի կողմից, իրենց մեկնաբանությունների վերաբերյալ արձագանք չեն լսել: Նշեցին նաև, որ եթե պայմանագիրը չվերջնականացվի միջոցների օգրագործման պահին, ապա Բնապահպանական ծրագրերի իրականացմա գրասենյակը չի կարող ազատվել հարկերից: Այս նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում վերջնականացնել «Գլոբալ կլիմայական հիմնադրամ-Հայաստան համաձայնագիրը»: Մեզ պարբերաբար կտեղեկացվի առաջընթացի մասին:

- Հանդիպում եմ ունեցել նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /EBRD/ ներկայացուցիչների հետ, նրանք նշեցին, որ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Հայաստանում վերականգնվող էներգետիկայի և էլեկտրոնային շարժունակության (e-mobility) ոլորտների հանդեպ՝ հետագա ներդրումների համար:  
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /EBRD/ ներկայացուցիչները նախատեսում են հանդիպել Հայաստանի վերակազմվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի /R2E2/ ներկայացուցիչների հետ:
- Դոկտոր Օյուն Սանյասուրենի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց «Գլոբալ կլիմայական հիմնադրամի» Խորհրդին Հայաստանի կողմից ներկայացուցիչ առաջադրելու հարցը: «Գլոբալ կլիմայական հիմնադրամի» Խորհրդին անդամակցելու գաղափարը ողջունելի է և հարկ է նշել, որ թեկնածության վերաբերյալ գրությունն արդեն ուղարկվել է:

Բնապահպանության

նախարարի առաջին տեղակալ՝

Իրինա Ղափլանյան

9/20/2018

X 

---

Irina Ghaplanyan  
First Deputy Minister of Nature Protection o...  
Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366